



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 110-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ
N 9/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և հիմք ընդունելով քաղաքացիներ Գևորգ Մուրադյանի և Անահիտ Ավետիսյանի դիմումը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հուլիսի 9-ին, N 8360 թվագրությամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի քաղաքի Շարա Տայյան փողոցի N 9/11 հասցեի 200.0 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Գյումրի համայնքի սեփականության իրավունքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30052014-08-0025) փոխանակության միջոցով օտարել՝ քաղաքացիներ Գևորգ Մուրադյանի և Անահիտ Ավետիսյանի՝ Շարա Տայյան փողոց N 5^ա հասցեի 200.0 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2027976) հետ:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ա.Ադամյան
- Գ. Ադամյան
- Ա. Բաղեյան
- Ա.Բաղդամյան
- Մ. Գաբոյան
- Ա.Գրիգորյան
- Վ.Եղիզարյան
- Հ.Խաչատրյան
- Հ.Կարապետյան
- Տ.Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն.Մեսրոպյան
- Ռ.Մխիթարյան
- Մ.Սահակյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՛
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
17 հուլիսի 2015թ.
ք.Գյումրի

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն
Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ